ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2024թ. **N------ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Բնապահպանության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Բնապահպանության վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ	1	323,000		323,000

4	գլխավոր մասնագետ-դենդրոլոգ	1	323,000		323,000
5	գլխավոր մասնագետ-էկոլոգ	1	323,000		323,000
6	գլխավոր մասնագետ-կենդանաբան	1	323,000		323,000
7	առաջատար մասնագետ	2	289,000		578,000
8	առաջին կարգի մասնագետ	2	282,200		564,400
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10**			**3,692,400**

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «784», «262,034,245» թվերը փոխարինել համապատասխանաբար «786», «262,639,445» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2313», «691,953,645» թվերը փոխարինել «2315», «692,558,845» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) փոքրաթիվ աշխատակիցներով կատարում է մեծածավալ աշխատանք: Ներկայումս վարչությունն ունի 8 աշխատակից՝ 1 վարչության պետ, 1 վարչության պետի տեղակալ, 3 գլխավոր մասնագետ, 2 առաջատար մասնագետ և 1 առաջին կարգի մասնագետ:

Վարչության կողմից համակարգվում են թվով 3 համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների («Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն», «Կենդանիների խնամքի կենտրոն», «Երևանի կենդանաբանական այգի») աշխատանքները: Վարչության մարդկային ռեսուրսները չեն համապատասխանում 1 միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաքների արդի բնապահպանական հիմնախնդիրների կարգավորման պահանջներին: Վարչությունը չունի իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման համար բավարար մարդկային ռեսուրսներ (դաշտային աշխատանք կատարող աշխատակիցներ): Վարչությունը կարիք ունի հզորացման և աշխատակազմի կարողությունների զարգացման, որպեսզի ապահովվի վերջին տարիներին իրականացված ինստիտուցիոնալ ու ծրագրային զարգացման բարեփոխումներով առաջադրվող գործառութային պահանջների կատարումը: Կարևորվում է Վարչության կարողությունների հզորացումը կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականությանն ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման համատեքստում: Այսպիսով, Վարչությունում շրջակա միջավայրի կառավարման հետ կապված օդի որակի, ջրային ռեսուրսների և վատթարացած հողերի մոնիթորինգի ու հսկողության, թափոնների կառավարման գործառույթների իրականացման համար ստեղծված չեն բավարար կարողություններ և ներկայումս դրանց պատշաճ իրականացումը պահանջում է լրացուցիչ կադրերի ներգրավում: Մասնավորապես, առաջարկվում է ավելացնել 1 գլխավոր մասնագետի և 1 առաջին կարգի մասնագետի հաստիք:

Ելնելով վերոգրյալից ներկայացված Նախագծով առաջարկվում է Վարչությունում ավելացնել 1 գլխավոր մասնագետի և 1 առաջին կարգի մասնագետի հաստիք:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ